I

Գիշերը շաղոտ էր, նույնիսկ ցուրտ, աշնան նման ցուրտ։ Անսովոր խաղաղություն էր տիրում, չկար այն որոտն ու դղրդոցը, որ պատերազմն էր իր հետ Զաբեսեդիե բերել։

Մարտերում ուժասպառված 55-րդ դիվիզիայի զորամասերը, որոնք ժամանակավորապես միացվել էին Պրոպոյսկի և Կրիչևի միջև գտնվող Սոժեի ափին պաշտպանական դիրքեր գրաված 13-րդ բանակին, օգոստոսի կեսերին անցան Բելոռուսիայի հարավ-արևելքում ընկած փոքրիկ գետը և նահանջեցին դեպի Ստրուգովսկայա Բուդա։ Այնտեղ նոր պաշտպանական գիծ էր նախապատրաստված։ Համարյա մեկ ամիս կանայք և նախազորակոչային տարիքի տղաները Վերեմեյկիից գնում էին Ստրուգովսկայա Բուդա՝ խրամատներ և հակատանկային փոսեր փորելու։ Սկզբում խրամատ փորողներին տանում էին Բաբինովիչիից այն կողմ գտնվող Լատոկա գյուղի մոտ, բայց ինչ-որ տեղից «էմկաներով» զինվորականներ եկան և հրամայեցին աշխատանքը դադարեցնել։ Խրամատ փորողներին նստեցրին այն բեռնատար մեքենաները, որ դեռևս չէին բռնագրավել բանակի համար, և ուղարկեցին Ստրուգովսկայա Բուդայից այն կողմ։ Կոլտնտեսականները այնտեղից վերադարձան մեկ շաբաթ հետո, շաբաթ, որն անց էին կացրել օր ու գիշեր աշխատանքի մեջ։ Կանայք հավատացնում էին, որ եթե մերոնք Սոժի մոտ, աստված մի արասցե, գերմանացիներին չկանգնեցնեն, ապա գերմանացիները, ինչ էլ որ անեն, Սոժի երկրորդ մեծ վտակից՝ Իպուտիից այն կողմ չեն անցնի։ Այնտեղ այնքան հող է կուտակված, և ավազի մեջ այնքան դերաններ են ցրված, որ սատանան ինքն էլ ոտքերը կջարդի։ Բայց առայժմ մարտերն ընթանում էին Սոժի ափին, հույս կար, թե գուցե

իսկապես գերմանացիներին չեն թողնի, որ առաջ անցնեն և Վերեմեյկին փորձանքից հեռու կմնա։ Ասում էին, թե անցած, առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ նույնպես գերմանացին այստեղ՝ Բեսեդ չհասավ։ Բայց հուլիսի վերջերին երևացին առաջին փախստականները՝ բաբինովիչցի հրեաները։ Իսկ դրանից մեկ շաբաթ հետո Վերեմեյկիի բնակիչները տեսան, թե ինչպես երկու թրթուրավոր տրակտորներ Բելայա Գլինայից ավազուտ, մեծ ճանապարհով քարշ էին տալիս հսկայական թնդանոթը՝ փողն անջատած հրետասայլից։ «Հեռահար թնդանոթ է»,— գլուխներն օրորում էին աշխարհ տեսած տղամարդիկ։ Իսկ եթե հեռահար թնդանոթը ռազմաճակատից հանում են, ուրեմն, ետ են նահանջում։ Մարդիկ միանգամից սսկվեցին և սկսեցին գետնի մեջ թաղել այն ամենը, ինչ որ արժեքավոր էր։

Օգոստոսի սկզբին կոլտնտեսության նախագահ Ռոդիոն Զուբարը վերջին անգամ ընդհանուր ժողով գումարեց։ Երկու գյուղերից՝ Մամոնովկայից և Կուլիգանկայից, որոնք Վերեմեյկիի կոլտնտեսության մեջ էին մտնում մեկ բրիգադի իրավունքով, ժողովի եկավ միայն վարչության հին անդամ Սիդոր Ռոմնյագինը։ Այդ ժամանակ Զուբարը կատարածուին ուղարկեց Մամոնովկա՝ միձեռանի Բոխանյոկին կանչելու։ Բանն այն է, որ շրջկենտրոնից՝ Կրուտոգորիեից, զանգահարել էին, որ անհապաղ արոտավայրից ետ բերեն կոլտնտեսությունում դեռևս մնացած կովերը և արևելք քշեն։ Հարյուր հիսուն գլխից բաղկացած հիմնական նախիրը դրանից առաջ էին Վերեմեյկիից տարել։ Տանողները եղել էին կոլտնտեսության նախագահի տեղակալ, ավելի ճիշտ՝ տնտեսության վարիչ Դենիս Զազիբան և երկու կոլտնտեսականներ՝ Իվան Խոխոլը և Միկոլա Ռացեևը, որոնք առայժմ զորահավաքի ենթակա չէին։ Մնացած կովերը կարգադրված էր քշել նույն ուղղությամբ, Կարաչևի վրայով մինչև Խատինիչի։ Հենց որ Բոխանյուկն իմացավ, թե նախագահն ինչու է իրեն Վերեմեյկի կանչել, սկսեց պոչ խաղացնել, նույնիսկ լաց եղավ, դատարկ թևքը նրա աչքը խոթելով։ Սակայն Զուբարն իրենը պնդեց, և Բոխանյոկն ստիպված պատրաստվեց ճանապարհ ընկնելու։ Նախիրը գյուղից քշեցին կիրակի օրը, երեկոյան կողմը։ Կովերն ասես զգում էին, թե իրենց ինչ

ճանապարհ է սպասում, սրտաճմլիկ բառաչում էին, վրդովելով ողջ գյուղը, և քանի դեռ անցնում էին գյուղամիջով, փորձում էին մտնել պատահած բակերը, որոնց դարպասները բաց էին։ Զուբարն ինքն էր հրացանի խզակոթով հրելով, օգնում, որպեսզի բակերը մտած կովերը դուրս բերվեն, հայհոյում ու բղավում էր այն կանանց վրա, ովքեր խնդրում էին գոնե մատղաշներին թողնել գյուղում, պատճառաբանելով, թե ով գիտի՝ ինչով կվերջանա այդ ամենը։ Զուբարը զայրանում էր և լրջությամբ բացատրում, թե ինքը շրջկենտրոնից ցուցում է ստացել և իրավունք չունի թշնամուն թողնելու կոլտնտեսության ունեցվածքը։ Վերջապես, նախիրը գյուղից դուրս եկավ ու Բոխանյոկը կեչու ճիպոտով զինված, ճանապարհով քշեց դեպի Գուտկա։ Իսկ երկու օր հետո գյուղ վերադարձավ Դենիս Զազիբան։ Իվան Խոխոլը և Միկոլա Ռացիկը նրա հետ չէին։ Նրանք գնացել էին Խատինիչում գրանցվող զորահավաքի կետը։

Զազիբան գյուղ վերադարձավ հիվանդ, որովհետև Վերեմեյկի գալու ճանապարհին քրտնած վիճակում սառը ջուր էր խմել և ատամներն ու կոկորդը սառեցրել էր։ Երբ կոլտնտեսության նախագահը գնաց Դենիս Զազիբայի խրճիթը, վերջինս պառկած էր փայտյա լայն մահճակալին։ Նա իսկապես որ հիվանդի տեսք ուներ։

Զուբարը հրացանը դրեց վառարանի և շեմի անկյունում և շինծու առույգությամբ ասաց.

— Հը, գործերն ինչպե՞ս են։

Դենիս Զազիբայի կինը՝ Մարֆան, ուղղեց ամուսնու ոտքերին գցված լայն զոլավոր կտավը և սուսուփուս դուրս եկավ խրճիթից։ Ամեն անգամ, երբ Զուբարը նրանց տանն էր լինում, Մարֆան դուրս էր գնում։

— Ուրեմն... կովերը հանձնեցինք, կնիքված ստորագրությունն էն է, սեղանին։ Միայն թե ես էսպես...— Զազիբան մեղավորի պես նայեց Զուբարին։— Դե, ոչինչ, կառողջանամ։ Առաջին անգամը չէ։ Միշտ էլ էդ անտեր կոկորդացավը ինձ էսպես ոտից գցում է։

Զուբարը խրճիթում անցուդարձ արեց։ Նա հաղթանդամ, վեց փթանոց տղամարդ էր, և ամառվա ընթացքում չորա-